



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 31

ՏԱՐԱԹ

31 ՄԱՐՏ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 ՂՐԶ	Տարեկան 54 ՂՐԶ	Տարեկան 42 ՖԲ.
Վեցամսեայ 25	Վեցամսեայ 27	Վեցամսեայ 6

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զբր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է :

ՄԵՆ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՉ 1900.

ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1906,

Հանդերձ ժիւղի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բովանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչք

Գ. ՍԱՐԳԻՍՕՑ Ե Ի ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, չղթաներու և գոհարեղէններու.

Կ. Պոլիս, Պաղե-գարու, Օոզգի-Պաֆ (Էօսկր-էֆէնի) վաճառասան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՕՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԱՌԻՄԻՆԵԱՆ

(T. آصاډوريان) شرکت صتيه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۵

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճառսկի քիւ 52

Հատր 40 փարա



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
 Եւ լիանգամայն մեքենաներ
 կը գտնուին

Սնկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
 բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լազործուածը,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ :

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՇԱՐԱԹԱԿԱԿԱՆ
 ՄԱՍՄԱՆՎՃԱՌՈՒՄՆԵՐ

- | | |
|---------------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, Թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | Զարչը Պօյու , Թիւ 120 . |

Կատարեալ Երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր զաւառներու բոլոր ֆապրիկներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , Թիւ 343 եւ
 343 կրկին , Տիւղօղլուի տունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ— ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 31

ՇԱՐԱՐ

31 ՄԱՐՏ 1907

“ԳԼԻՇԷ” ՆԵՐԸ

... Բայց նախ՝ ի՞նչ է գլիշէ ըս-
ուածը : Թեքեա՝ ընթերցողներէն շա-
տեր առիթ ունեցած չըլլան արուես-
տական այս բաղադրութեան հասու ը-
լալու : Ո՛ր եւ է լուսանկարի կաղապա-
րըն է գլիշէն : Զինկօկրաժը՝ արտագրե-
լիք պատկերին նմանը լուսանկարելով՝
կարտատպէ զինկի վրայ, յետոյ մաս-
նաւոր բաղադրութեան մը մէջ լոգան-
քի կ'ենթարկէ : Աս լուծոյթին մէջ
պատկերին սեւ մասերը ցցուած կը մը-
նան, իսկ ճերմակ մասերը կը ցածնան :
Յետոյ նոյն զինկի կտորը փայտի վրայ
կը գամէ և երեւան կուգայ պատկերին
գլիշէն որ իբր կաղապար կը յանձնուի
տպարան :

Ու եղաւ որ մեր մէջ ալ տարեցոյց
հրատարակողներ և որ ի կարգին՝ գա-

ղափարը յղանան, սա կամ նա անձին
պատիւ մը ընելու համար (կամ անոր
չքով չքաւորուելու՝ իրենց ձեռնարկը
աւելի տարածելու համար) անոր պատ-
կերը դնեն իրենց լրագրին կամ տա-
րեցոյցին կամ գիրքին մէջ : Ասոր մէջ
ի՞նչ անպատեհութիւն կայ պիտի մը-
տածէ Վահան էֆ. Փափազեան բարե-
կամս, ո՞վ չ'ուզեր քանի մը փարա
վճարելով՝ գո՛նէ պատկերը տեսնելու՝
օրինակի համար՝ այն շուտիկին որ
Քրիզանթէմ կը ստորագրէ, ո՞վ չ'ուզեր
իր մօտ ունենալ պատկերը անանկ ան-
ձի մը որ՝ ըսենք թէ Հիւանդանոցին
40-15000 ոսկի կտակեր է, ինչպէս
այն տարարնակ Տիկինը որ անցեալները
այդքան առատաձեռն նպաստ մը ըրեր
էր, կամ, վերջապէս հանրային շնոր-

հակալութեան արժանի գործ մը կ'ընէ, կամ գրական-ճարտարական-գեղարուեստական հոյակապ արտադրութիւն մը, գաղափարի կամ շինուածքի մնայուն կոթող մը կը կանգնէ, իմ ուքու երախտագիտութեան վրայ ճշմարիտ իրաւունքներ մը կ'ունենայ:

Այդ պարագային լաւ գործ մը կ'ընէ Հրատարակիչը՝ հանրային զգացումներուն հարազատ թարգմանը կը հանդիսանայ այդ հազուագիւտ տիպարները ծանօթացնելով ամէնուն:

Բայց կան հրատարակիչներ որ տըկարամտութիւնը կ'ունենան՝ իրենց ձեռնարկը չահագործելու իբրեւ միջոց՝ անանկ տիպարներ ալ հիւրընկալելու որ մարդ կ'ապշի կը մնայ թէ ի՞նչ է գոյութեան իրաւունքը այդ պզտիկ դէմքերուն որ՝ մերթ հոս մերթ հոն կուգան կը ցուցադրեն ինքզինքնին: Կան ալ այդ անշահ ու աննշան դէմքերէն որոնք՝ փառատենչիկ զգացումներով՝ ջանահնար կ'ըլլան իրենց անզուգական գիշէն սպրդեցնելու սա կամ նա հրատարակութեան մէջ. ամէն տեսակ նրբամտութիւն ու ենթրիկ, քծինք ու փոքրոգութիւն օրինաւոր կը դըտնեն յաջողելու համար. իրենց առձեռն պատրաստ գիշէն կը գտնէք քիչ մը ամէն կողմ, և պէտք եղած չեղած տեղն ալ առիթ կը ստեղծեն, ուրիշ գիշէներ վերջին պահուն յետաձգելով՝ իրենցը առաջ քշելու: Ձեռքերնուն գայ, իրենց աննման ու այնքան փընտռուած (!) պատկերը ամէն տարեցոյցի, ամէն գրքի ճակատ պիտի փակցնեն, և եթէ ճարը գտնեն, իրենցինէն զատ, իրենց օխտը պորտին ալ ռեկլամը պիտի ընեն այս կերպով: Ո՛ւր էր թէ իրենց բոլոր պարագաներն ալ այս բաղդին արժանացնել յաջողին, և թէ

վարժապետ կամ վարժուհի են, չ'ըլլար որ, կը մտածեն, սանկ իրենց աշակերտներունն ալ, աշակերտուհիներունն ալ, դպրոցի տնտեսուհիին ալ պատկերը և փառուորումը տեսնեն՝ իբրեւ լուսապսակ իրենց չքնաղ դէմքին ու գովանի ծառայութիւններուն: Չափազանցութիւն է ըրածնիստ Կույէ: Բայց ամէն ճշմարտապանցութիւն՝ փաստն է արդէն ապացուցուելիք իրողութեան: Եւ այս չափազանցուած ձեւին մէջ միշտ երեւան կուգայ քըննադատուած այս նենդամիտ փառասիրութեան որ՝ միւս՝ օրինաւոր փառասիրութեան ալ արժէքը կը նուազեցնէ ամէնուն աչքին: Ի՞նչ չահ, պարոններ, անամէջ տիպարներով մեր միտքը մոլորեցնելու, իրական արժանիքներու քով ապուշ տափալուծիւններ ցուցադրելու, ճաշկները լղրճելու: Կը կարծէք որ ձեր թոխզը անընթաց անցնի, գիշէի ճարպիկ ձեռնածութիւնիդ չ'այստնուի: Այդչափ այլասիրուած կը կարծէք ուրիշները՝ որ կանդրադառնան այս անշահ կատակնուգ ու իրենց արհամարհանքը հրապարակով ալ յայտնելու չափ կորով չունենան:

Ա.

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 դրշ. գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Բաժանատո փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ՃԱԺԱՑՈՒՑԱԿԸ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏԿԵՐ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

(Տեսարանն է կամուրջէն անդին, ուր որ
կուգի: Փայտաշէն ցան մը երկրորդ յարկը
սենեակ մը: ձերմակ խառայէ վարագոյրներ.
սենեակին հակասը մէկ ծայրէն միւս ծայրը
սէսիւր մը, ներմակ ծածկոցով: Պոօ մը,
վրան լամպա մը, երկու կողմը բաղարներ
բուրդով շինուած արհեստական ծաղիկներով,
որոնց հով բուրդէ քանարեաներ բառած են:
Քանի մը հաս մոխրամաններ, ծխախոտի ա-
ման մը՝ խեցիով շինուած: Հայելի մը, վրան
քանի մը քնանեկան լուսանկարներ: Գիմացի
պատին վրայ Քեմովաքիյէն 2 պատկերներ,
երջանակի մէջ: Քիչ մը հեռուն հազգիներ.
միւս պատին վրայ գունաւոր պատկեր մը որ
Մովսէսը կը ներկայացնէ ջուրէն ազատուած.
Եւ ուրիշ երջանակի մէջ չեմ գիտեր ինչի
պատկեր: Սենեակին մէջեղը կը սեղան մը,
որուն վրայ նստած է ներմակ լաթ մը լայն
ֆոօք եզերքներով: Աթոռներ, մանղալ մը):

Ա Ն Յ Ի Ն Ք

ԳԻՐԳՈՐ ԱՂԱ, Ոսկերիչ, 56 տարեկան.
գիշերնոցով, օղիի քեփ-
սին ֆովիկը. լրագիր կար-
դալու վրայ է:
ՄԱՆՆԻԿ ՀԱՆՐՄ, Կինը, 40 տարեկան, մու-
սակ հագած է կանանչ
Երեսով:
ՍԵՓՈՆ, 17 տարեկան, դպրոցա-
կան որ սենեակին մէկ
ծայրը «լոյս գուարք» ի
վարժուքիւններ կ'ընէ:

Գիրգոր աղա. — (Ձեռքերը ծունկերուն
վրայ իջեցնելով): Ծօ՛ Սեփոն:
Սեփոն. — Ի՞նչ է, հայրիկ:
Գիրգոր աղա. — Էկու նայէ ծօ՛, սա
Ֆրանսերէն պաները ի՞նչ է: (Սըլանտիտի
ճաշացուցակը ցուցունելով):
Սեփոն. — (Կը կարդայ անձայն):
Գիրգոր աղա. — Է՛յ ի՞նչ է եղեր:
Սեփոն. — Կայնէ՛ նայիմ, հայրիկ:

Մաննիկ հանրմ. — Ծօ՛ չըսե՛ս:
Սեփոն. — Նա՛, հայրիկ, Պէյօղլու սա
Սըլանտիտ մը կայ եա՛, զիտֆէթ պիտի տայ
էղեր, իշթէ անոր ավիշն է:

Գիրգոր աղա. — Սա մեր չարչըն՞ Թօ-
քատլեանին. աֆէրի՛մ Թօքաթլեան, ծօ՛
նայէ տէ օրինակ ա՛ռ. ի՛նչ էր ի՛նչ էղաւ:
Հէլպէթ մարդս նամուսովը աշխատի նէ ա-
տանկ առաջ կերթայ. էս չի կացի ամա կըսէն
կոր քի, ատ նոր պացած տեղը Բարիզ պիլէ
չի կայ եղեր: Ավիշոն ի՞նչ կըսէ կոր, չի կար-
դա՞ս:

Սեփոն. — Կայնէ, կարդամ պիտի: Hors
d'oeuvres variés. potages:

Գիրգոր աղա. — Ծօ՛, ես ատկէ ի՛նչ կը
հասկընամ. հայելար չի ղուրցե՞ս:

Սեփոն. — Հիմա ասիկայ թարգմանելո՞ւ է:

Մաննիկ հանրմ. — Տղաս, ատ ալ լա-
խըրտը՞ է. սա մարդը ֆրանսերէնէն ի՛նչ կը
հասկնայ: Ի՛նչ տէյի գաղղիներէն կը սորվիտ
կոր:

Սեփոն. — Կայնէ՛ անանկ է նէ: Հայրիկ
ասիկա լիթման ըլլալու է. չօրպա կայ, պան
կայ:

Գիրգոր աղա. — Է՛յ պաշխա՞:

Սեփոն. — (Կմկմալով) Hors d'œuvres ...
hors d'œuvres. պա՛ն, սա ... hors d'œuv-
res. միտքս չի գար կո՛ր, հայրիկ, oeuvre
գործ ըսել է ամա, hors d'œuvres չիյտէմ
կոր:

Մաննիկ հանրմ. — Է՛յ վաղը վարժապե-
տիդ հարցուր:

Սեփոն. — Variés ... ըսելը, կայնէ.
ը՛ր՛...

Գիրգոր աղա. — Ծօ՛ ատ տաճկերէն է,
վա՛ր եէ. սանքիմ կընա՛ կեր:

Սեփոն. — Ի՛նչ կըսես, հայրիկ, սա ու-
րիշ պան է: Չօրպա կայ:

Գիրգոր աղա. — Է՛յ ատ հասկցանք,
պաշխա՞:

Սեփոն. — (Կը կարդայ) Consommé Juli-
enne (քիչ մը մտածելով) consommé հատած
ըսել է:

Մաննիկ հանրմ. — Է՛յ չօրպան հատեր է
նէ ի՛նչ տէյի կը գրէ կոր:

Սեփոն. — Էտէվէն կէնէ չօրպա կայ,
հայրիկ:

Գիրգոր աղա. — Ծօ', սըվիկա չիտակ չի կարգած:

Սեփոն. — Իշտէ կը կարդամ կոր եա'. St. Germain. սա' օխտապաղ մը կար եա վախթին Իւսկիւտար թէյգէյիս կացինք նէ, կիտեմ, Ալիքսան ազան մեզի թէյթրօ տա-րաւ, իշթէ ան մարդուն անունը Սէն Ժէր-մէն էր:

Գիրգոր աղա. — Աղէկ ամֆա, ատ լիս-թային մէջ ի՞նչ գործ ունի:

Սեփոն. — Էս կիտեմ:

Գիրգոր աղա. — Տահա', տահա':

Սեփոն. — (Կարդալը չարունակելով): Patès բաստա: Croquette de volaille. ա'ս չիտեմ, pilav paysanne. իշտէ բիւաֆ ... paysanne իգական է, հայրիկ ... պա'ն ը-սել է, զեղացի կնկան բիւաֆ:

Մաննիկ հանրմ. — Ատ ալ ուտելու պա'ն ըլլար:

Սեփոն. — Ծուկ կայ. Bar sauce Hollan-daise ... hollandaise. Հոլլանտա Ֆիլէմէնիկ ըսել է. bar զիծ ըսել է, երէկուան դասիս մէջը կար:

Գիրգոր աղա. — Ծօ' ատ Ֆիլէմէնիկ պար ըսածդ Ֆիլէմէնիկ պանիր է. պարին վրայ պատիւ չկայ: Է՛յ եաքը ...

Սեփոն. — Turbot frit. ա'ս չի հասկցայ, Rouget en caisse, անտուկով կարմիր. Homard à l'américaine Ամերիկայի. Entrées մուտք. Canard aux petits pois ... pois ծանրութիւն իշթէ, պզտիկ ծանրութիւնով էօրտէկ:

Գիրգոր աղա. — Հասկցա՛յ, բալաղ ըսել կուղէ կոր:

Սեփոն. — Vol au vent: Հովին կը թռչի. Toulouse, քաղաք մըն է Փարիզի մէջ. հայ-րիկ: Cuisseau de veau ...

Մաննիկ հանրմ. — Հէլպէթ, բիւթիւն զէնկիննէ'րը կերթան ատանկ տեղերը, մինք չպիտի երթանք եա':

Սեփոն. — (Միշտ կարդալով) Noisette ֆընտրիս. agneau խուզի. aux champignons.

Մաննիկ հանրմ. — Ա'ս ֆրէնկներն ալ բիւթին շամբանեա կը խմեն. Սօֆիկէնց տի-մացը ֆրէնկ մը կա եա', անտուկով տուն կը պերէ:

Սեփոն. — Rotis. տապկուած. Ժիկօ ...

Գիրգոր աղա. — Ատտար ֆրէնկի կերա-կուրներուն մէջ Կիկօն ինչ գործ ունի:

Սեփոն. — Poulet հաւ իլէ Rosbif. Lé-gumes զարգալաթ: Asperges. Flageolets, haricots verts. վէր օրթ ըսել է, հայրիկ: Ragout aux artichauts feuilles de vigne farcies ...

Գիրգոր աղա. — Աճէմ բիւաֆիին ֆարսի կ'ըսեն կոր զէյեր:

Սեփոն. — Էս կիտեմ ... entremets ... կերակուրին մէջ, հայրիկ, տօնաուրմա կայ եղեր. բօրթուբալ. վանիկա. բասթա. զըք-տուէի. խասալիֆ. Lait caillé. caille պլտըր-ճին ըսել է. գիրքին մէջը կար ... սիւտով պլտըրճին. սիւտովճին Riz au lait կըսեն կոր. 20 զրուշ նախաճաշ. կէնէ Hors d'œuvres. երեք plats ... plat ըսելը տափակ ը-սել է:

Գիրգոր աղա. — Ծօ', իրեք տափակդ 30 խուշուշ ըսել է. ատ խրտար բարա կու-տացուի. եանլը ըլլալու է:

Սեփոն. — Էս ի՞նչ ընեմ, իշտէ անանկ կրեր է. Et desserts. անապատ. au choix sur la carte. Թուղթին վրայ. Vin compris. Vin գինի. compris հասկցուած, կէնէ չօր-պա, կէնէ ծուկ. մուտք, տապկուած. սա-լաթա, անապատ. հասկցուած գինի, 25 զրուշ:

Գիրգոր աղա. — Հա' ատանկ ըսէ, ատ խրտար պանին ալ 25 զրուշ շատ չէ, զաթը Թօքաթլեանը քիպար մարդ է, էվէլի չառ-ներ:

Սեփոն. — Ի՞նչ կ'ըլլայ հայրիկ, օր մը մեզի տար:

Գիրգոր աղա. — Ծօ' կայնէ սա զիւմբիտ մատնին ծախեմ տէ ...

Մաննիկ հանրմ. — Ատ մատնիովդ ո՞ր մէկ պանը պիտի ընես, չիտեմ քի:

Գիրգոր աղա. — Տո'ւն աչկըս նայէ, կը-նիկ: Աստուած ողորմած է. սօն խառէխս ալ տուր տէ կերակուրի իջնանք: Ան չէ ամմա, ի՞նչ էս եփեր:

Մաննիկ հանրմ. — Հէլպէթ կը տեսնաս:

Գիրգոր աղա. — Հայտեցէք, Սեփոն, սա թէփսին վերցուր:

(Վար կ'իջնեն: Մանդուխներուն վրայ)

Մաննիկ հանրմ. — (Էրկանը ականջին). Հա' քա, Գիրգորիկ աղա, չօճուխը էքէի ֆրանսըզճան կը հանէ կոր:

Գիրգոր աղա. — (Հրճուանքով). Էշու խրտար կ'ըլլայ կոր, զէյեր տահա չի սօրվէր: Սէեհն պիլմեզ, տղրայան պիլիր:

Յ. ԱԼՓԻՍԻ

ԲԵՐԱՑԻ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Բերայի ծանօթ ընտանիքի մը աղջկան դասախօսութեան համար հրաւեր եղած էր ինծի, առաջարկ մը՝ զոր մերժելու պատճառ մը չունէի, քանի որ վարժունքիի soufienօէն աղատելէս վերջ ապրուստի միջոց ընտրած էի leçons particuliersները:

Աշակերտուհիս՝ այն տան հազիւ տասն և չորս դարուններու կոկոն մը, առաջին օրէն այնքան տաքօրէն փարեցաւ ինծի, որուն հանդէպ ես ալ իրեն մասնաւոր տեղ մը բացի կարծես սրտիս մէջ:

Կը գուրգուրար վրաս, կը սիրէի զինքը, ու քիչ օրէն մեր մէջ գոյացաւ այն անուշ յարաբերութիւնը՝ որ շատ քիչ անգամ կը տեսնուի երկու քոյրերու միջեւ:

Տանը մէջ մասնաւոր խցիկ մը, շատ շէք կահաւորուած, մեր տրամադրութեան տակ դրուած էր իբր դասարան, ուր կը քաշուէինք կէս օրէն վերջ այն օրերուն որ կայցելէի իրենց:

Տիկին մայրը, աղնիւ կին, անդուգական բարեմասնութիւններով օժտուած, այնպիսի սէր մը կը տածէր ինձ հանդէպ՝ որ մայր մը միայն կրնայ զգալ ու արտայայտել: Ամէն անգամ որ ձեռքը կը խնդրէի սենեակէն ներս մտնելու՝ տաք համբոյր մը կը զետեղէր՝ ճակարկի վրայ, և ժամերով զիս քովը առած կը տեսակցէր ու միշտ կ'արթնցնէր զիս՝ յիշելով պարտականութիւնս, որ էր խրատել անփորձ գաւնուկը աշխարհային խափուսիկ, կեղծ ու պատիւ փայլերէն զգուշացնել զինք, վերջապէս բաներ՝ զորս կը կրկնէ արդէն խնամքիս յանձնուած այդ մատղաշ էակին:

Տարի մը այսպէս անցաւ, օրիորդը բաւական յառաջացած էր հիմա ուսման և ընտանեկան պարտականութեանց մէջ:

Շաբաթ իրիկուն մը, երբ դասերնիս աւարտելով կը պատրաստուէի մեկնիլ, օրիորդը վիզս պլուած կաղաչէր որ նոյն գիշերը իրենց մնայի: Կաղաչէր կը պաղատէր և համբոյրներով կը ծածկէր այտերս, որպէս զի տեղի տամ ու չի մերժեմ առաջարկը:

Տիկին մօրկանն ալ թախանձանքին չի կենալով դիմադրել՝ հաւանեցայ:

Ապաստաւոր մը անմիջապէս գնաց մերին ներուն լուր տալու թէ՛ նոյն գիշերը իրենց պիտի մնայի:

Սեղանը շատ զուարթ անցաւ, տան տէրն ու տիրուհին իրենց գեղեցիկ անէքթոսներով բնաւ զգալ չի տուին ամբողջ ժամուկէս միջոցը, երբ ամէնքս մէկ սալօնը ելանք սուրճ առնելու համար:

Դաշնակ, ընթերցում, պատմութիւն իրարու յաջորդելով զմեզ թուլցուցին և անուշ քունը եկաւ ծանրանալ մեր արտեւանունքներուն վրայ:

Տիկինը յատուկ մահճակալ մը պատրաստել տուած էր օրիորդին սենեակը, ուր պիտի գիշերէինք երկուքս:

Ըստ հին և աւանդական սովորութեան, գիշերքարիի ձեռք պաքէն վերջ հրաժեշտ առինք քաշուելու մեր առանձնատնեակը:

Օրիորդին ուրախութիւնը յուզմունքի փոխուած էր ալ, այնքան գոհ էր զիս իր սենեակը հիւրնկալելուն համար:

Մինչեւ հոս կարելի է ոչ ոք բան մը հասկցաւ թէ՛ ինչու կընեմ յիշատակութիւնը անէքթոսի մը, որ ընթերցող հասարակութեան հետ բնաւ առնչութիւն չունի:

Իրաւունք ունիք, բայց շարունակութեանը մասին ոչ, քանի որ պիտի պարզեմ այնպիսի անակնկալ և հետաքրքրաշարժ միջադէպ մը՝ ուրկէ պիտի կրնաք օգտուիլ:

Ա՛խ . . . տասն և չորսէն տասն և վեց տարուբերներու սիրտը . . . : Ոչ դուրսէն և ոչ ալ ներսէն կարելի է ուսումնասիրել զանոնք, պրպլտել անոնց էն թաղուն խորշերը, փափուկ մատներով զարնել այն կոյս թէլերուն, որոնք այդ մատղաշ սրտիկներու վրայ լարուած են: Ի՛նչ անուշ, ի՛նչ զգայուն կըլլան անոնք, կոյսի պէս անարատ, ձիւնի պէս ջիւղ ու մաքուր:

Բաւական խօսակցելէ վերջ առանձինն,

երկուքս ալ պատրաստութիւններ կը տեսնէինք ննջելու :

Մինչ ես դբադած էի իմ թուալէթովս, հայելին մէջէն նշմարեցի որ օրիորդը կուրծքէն բան մը հանելով բարձիկին տակ զետեղելէ վերջ դուրս ելաւ սենեակէն :

Հետաքրքրութենէս աւելի համոզումս արդարացնելու համար, անմիջապէս մահճակալին մօտեցայ, գտայ այդ պահած գանձը որ ... պատկեր մ'էր, լուսանկար մը :

Քսան տարեկան, հաղիւ թէ պեխերը մըրոտած, չիք և սիրուն երիտասարդի մը լուսանկարն էր այդ, անուշահոտ տանթելէ ծըրարիկի մը մէջ փաթթուած ... :

Ճանչցայ այդ դէմքը, և հակառակ իր անկենդան լուծթեան, իմի՛ններուս մէջ նայող իր վառ և կրակոտ աչքերը շատ բան խօսեցան ինձի այդ մէկ երկու վախու վայրկեաններուս մէջ, զորս անցուցի :

Օրիորդը դեռ սենեակ չի մտած՝ արդէն լուսանկարը իր տեղը զետեղած էի :

Անկեղծ սիրոյ փոխադարձ համբոյրներով քաշուեցանք մեր անկողինները, և Մորիէնոս նոյն ինքն օրիորդը առաւ իր թեւերուն մէջ որ վերացաւ, մինչ ես մնացի մտածկոտ, երկար ժամեր անցուցի անքուն խորհելով, օրիորդին այս անակնկալ գաղափարին վրայ : Ուրիշ ո՛ր Երուանդը յաջողած էր յարաբերութեան մտնալ, այդ սալօնի օձը, ինչպէս կըրցած էր սողոսկիլ անմեղ սրտի մը խորը, ինչպէ՞ս ... :

Երուանդը, ծպտեալ սրիկայ մըն էր, զոր ճանչցուցած էին ինձ, ոչ թէ մէկու մը ծանօթանալու համար այլ՝ մէկէ մը զգուշանալու կանխամտածումով : Ասիկայ այն տղան էր, որ իրիկունները օձի պէս շապիկ փոխելով ինքզինքը Հայ-Լայն կը ձեւացնէր, ու շատ մը տուններ կը մտնէր կ'ելլէր, չնորհիւ իր սուր լեզուին և անցուկ գեղեցկութեան, մինչդեռ իրապէս ծանօթ ֆօթօկոնաֆի մը պարզ որթուչէօռն էր, մուրոտ կատու մը իր գործին մէջ, և կատարեալ օձ մը իր ներսովն ու սրտովը :

Ճար չկար, աղջիկը փրկելու էր, անոր պատիւը չի թունաւորած ազատելու էր զինքը թաքուն վտանգէն :

Որոշումս տուած էի արդէն, երբ ձմռան

մշուշապատ արշալոյսը ստոռներուն ետեւէն ներս կը թափանցէր, աղոտ լոյս մը սփռելով սենեկին մէջ, և տակաւ իր մէջ լուծելով նայթ-լայթի պտուղի բոցը :

* * *

Ձմռան մէջ ինչ հաճելի և պայծառ օդեր կուեննանք :

Հետեւեալ օրը՝ կիրակի, ճիշդ այդ օրերէն մէկը, պայծառ արեւ մը, մաքուր օդ և չոր ցուրտ մը կը տրեւէր : Յերեկէն վերջ խնդրեցի մայրիկէն որպէս զի օրիորդին հետ միասին՝ պահ մը դուրս ելլանք պոռոյտի, մաքուր օդ ծծելու համար : Առաջարկս չի մերժուեցաւ, երկուքս մէկ լաւ պատսպարուած մեկնեցանք տունէն և քայլերնիս ուղղեցինք դէպի շիտակ ճամբան, մինչև հոն ուր մտադրած էի տանիլ միմիկի ընկերուհիս :

— Տե՛ս անուշս, ըսի իրեն, ի՛նչ աղուոր ֆօթօկոնաֆներ կան ցուցադրուած ... եթէ կուզես վեր ելլանք և երկուքս ալ քով քովի քաշուինք, մայրիկին սիւնքով մը ըրած ըլլալու համար :

— Մի՛ս ... ամենայն սիրով, մանաւանդ ձեզի հետ, ըսաւ ան, գառնուկի մը միամիտ հրճուանքով, և անմիջապէս վեր ելանք սանդուխներէն : Ինչպէս գիտեք, լուսանկարչատուններու մէջ կիրակիներն ալ կաշխատին :

Ու հազիւ թէ սալօնէն ներս մտած թէ չէ, երիտասարդ մը ելաւ դէմերնիս, գործաւորի աղտոտ ու կապոյտ Եմիլիոյ մը, գլուխը բաց մազերը խառն ի խուռն, սգաւորի թանձրը մորուքով մը, մուրոտ, աղտոտ գէմքով, որ քլիշէ մը բռնած դուրս կ'ելլար ... :

Թեւիս տակ ցնցում մը զգացի, ցնցումը այնքան ուժգին՝ որչափ չէ կարելի զգալ ելեքտրական բեկի մը հոսանքէն :

Օրիորդը ոտից ցլուխ կը դողար, մինչ երիտասարդը շանթահար՝ գերեզման մը կը փնտռեր ինքզինքը ծածկելու համար ... ամօթէն ... :

Բարի ձեռնարկիս մէջ՝ յաջողած էի թէ ոչ՝ այդ կէտը չեմ կրնար որոշել, սակայն սա չափը գիտեմ որ, երկու օր վերջը երբ իրենց այցելեցի՝ Օրիորդը տկար է ըսին, գնայ զինքը տես :

Գիտէի թէ ատանկ պիտի ըլլար:

Շտապաւ վեր ելայ նոյն սենեակը: Ճերմակ սիւնա գիշերնոց մը հազած էր աշտակերտուհիս, համակ ճանքի:

Որչափ ազդեցիկ է լուռ պերճախօսութիւնը:

Անհասնում և անվերջ համայնները արցունքի կայլակներով կը թրջէին այտերս ու խօսք մը, բառ մը չէր թռէր բերնէն:

Ամէն բան հասկցած էր, և իր որոշումը տուած:

Երբ պահ մը դադրեցան իր հեծկատութիւնը, կաթնաթոյր ձեռքը հեռուն դէպի քօնօլին երկարեց . . . :

Ան գիշերուան տեսած լուսանկարս կտոր կտոր, բզկի բզկի եղած էր բանիւին մէջ քօնօլին մօտիկը . . . :

2 u 2 u

ՆՈՐ ՕՐԻՆԱԿ ՏՈԿՈՍ ՄԸ

Հակառակ ծնողքիս խրատներուն և ազդարարութիւններուն՝ թէ ինքնիր գլխուդ դործ մի տեսներ, կարծես մէջս սատանայ մը կար որ միշտ կը դրդէր զիս ամէն բան ինքնիր գլխուս կատարելու:

Տարիքս լեցուած էր և ծնողքս կը պատրաստուէր աղջիկ փնտռել զիս կարգելու համար, սակայն ես մերժեցի, առարկելով թէ ես ինքս ընտրութիւնը պիտի ընեմ և իրաւունք ալ ունիմ, քանի որ կինը ես պիտի առնէի և ոչ թէ իրենք:

Օր մը փնտրողքի ելայ: Օրերով, չաբաթներով փնտռեցի առանց բան մը ձեռք ձգելու: Չմտը կանցներ և ղեռ ես գիշերները մինակ էի:

Բարեբախդաբար այս տարի ալ ձմեռը երկայն տեւեց:

Կիրակի օր մը բաթրարի մը խանութը հասած դուրսէն անցնող աղջիկները կը դիտէի ներսէն, ինձ յարմար ընտրութիւն մը

ընելու մտքով: Խոր մտածումներու մէջ ընկըմած էի, աչքերս դէպի անոնց յառած՝ զանոնք կարենալ տեսնելու: Այդ պահուն և ոչ մէկը աչքիս կերեւար: Ապուշ ապուշ կը նայէի՝ առանց նպատակիս կարենալ հասնելու: Երբ յանկարծ ծերուկ կնոջ մը հետ չափազանց գեղեցիկ դրախտահաւ մը՝ եկան ճիշդ դէմս հասնան: Աչքերս մեքենաբար անոնց վրայ սեւեռեցի և սկսայ անօթի շան մը պէս աղջկան դէմքը դիտել:

Ամբողջ մարմնովս կը դողայի, վրաս մարկիք կուգար, մէկ վայրկեանի մէջ բրած էի ընտրութիւնս և որոշած էի կնութեան առնել այդ չափազանց գեղանի ու հրապուրող հրեշտակը:

Սկսայ ուրիշ աչքով նայիլ անոր, նախ ծիծաղ մը և յետոյ հայեացք մը, և որքան մեծ եղաւ ուրախութիւնս երբ տեսայ թէ՛ ան ալ ինձ ժպտեցաւ:

Անմիջապէս գրպանէս թուղթ ու մատիտ հանեցի և հետեւեալ նամակը գրեցի վայրկեանապէս:

Ազնիւ Օրինդ,

Ձեզ գիտե՛ք որքան սիրս գրաւեց ձեր գեղանի դիմքը, եւ որքան դիւքեց ձեր քաղցր ժպիսը, հոս նստելուս նպատակը փողոցէն անցնող աղջիկներուն մէջէն ինձի համար կին մը ընտրել եր, եւ անա դուք միայն կրցա՛ք սիրս գրաւել: Եթէ կը հաճի՛ք ձեր ձեռքը տալ ինձ, կը խոստանամ քանի մը օրէն իսկ ձեզ հետ ամուսնանալ, միայն թէ ձեր մայրը կամ մեծ մայրը հաճեցե՛ք մեր տունը դիմել խօսելու համար:

1907 Յունիս 27

Բերա

Մնամ միշտ ձեր

ժպիսներուն կառօ

ՓԹԱՓՏՈՒՐԵՆՅՅ

Դուքս եղած պահուն կամաց մը իրեն տուի: Նոյն օրն իսկ մեծ մայրն ու մայրը երկուքը մէկ եկած էին մեզի: Ամէն բան խօսած և Ս. Պսակի օրն ալ որոշուած էր:

Մայրս զիս առանձին կանչելով ըսաւ թէ՛ մեղք ես, այդ աղջիկը պատուաւոր մէկը չէ, անոր համար հաղար ու մէկ տարածայնութիւններ եղած են, վերջը չի զղջաս: Սակայն ես ամենեւին ծնողքիս խօսքին կարեւորու-

թիւն չտալով՝ յամառեցայ և պնդեցի որոշումիս վրայ:

Հարսանեկան պատրաստութիւնները քիչ ատենի մէջ տեսնուեցան: Փետրուարի 19ի երկուշաբթի օրը կէս օրէ վերջ ուղղուեցանք կառքերով եկեղեցի, յետոյ ուղղակի տուն, ուր սկսան խրախճանութիւնք:

Գիշերուան ժամը վեցին, պարերուն ու զուարճութիւններուն ամենէն ոգեւորեալ ատենին կինս յանկարծ անյայտ եղաւ մէջտեղէն, կամաց մը զոքանչիս մօտեցայ և ահանջն ի վար հարցուցի թէ՛ ո՞ւր է կինս:

Կլօխը քիչ մը ցաւելուն համար վերի օտան ելաւ, պատասխանեց ջատուկը:

Անմիջապէս ուղեցի կնոջս քովը երթալ, բայց զոքանչս թեւէս քաշելով «վեր մէլ՝ լար պէօիւղիւր կըլլայ, ինծի ապսպրեց քիմ մէկը թող չիտամ քիմ քովը երթայ», ըսաւ ճատալօղը:

Չի կրցայ խելք հասցնել թէ՛ կինս իմ երթալէս ինչո՞ւ անհանգիստ պիտի ըլլար, նախ զոքանչիս խօսքին անսալով մտածեցի չերթալ, և շատ լաւ ըսելով բաժնուեցայ զոքանչէս խնդրելով որ ինք գոնէ երթայ և հոգ տանի:

Հազիւ քիչ մը հեռացած էի երբ ներսէս կարծես ձայն մը զիս մօտեց որ կնոջս քով երթամ: Անմիջապէս անապարանքով վեր ելայ կնոջս պառկած սենեակը երթալու համար: Բայց ինչ տեսնեմ գուռը ներսէն գոցուած և նիքն ալ ետեւէն դրուած էր:

Նախ կամաց մը դարկի, բայց ձայն ձիւն չիկար, քիչ մը աւելի ոյժով զարկի, «բայց դարձեալ բացող չեղաւ: Զարմացայ, բարկութիւնս վերջին կետին հասած էր, սրտիս մէջ անմիջապէս վատութեան մը կասկածը արթնցաւ, հասկցայ թէ գաղտնիք մը կար, մանաւանդ որ զոքանչիս գոյնը մոխիր դարձած էր, և կը համոզէր զիս որ վար երթամ, ըսելով թէ՛ հիմայ կուգայ, մարդ չիգայ տէյի գոցեր է գուռը, պէլքիմ քունը տարեր է աղջկանը, և ձեռքէս կը քաշէր դրսն քովէն զիս անդին տանիլ ջանալով:

Կորի՛ր ճատալօղ գոչեցի, այլայլած ու մէկ ձեռքով հրեցի զոքանչս որ գնաց պատին զարնուելով՝ նուաղած ինկաւ: Բարկու-

թեմէս կրակ կտրած ինչ ընելս չէի գիտեր, խնդրենալուս մազ մնացած էր, վստահ էի թէ՛ անպատճառ բան մը կար գործին մէջ, մանաւանդ որ սանդուխին գլուխը հասած պահուս ներսէն էրիկ մարդու մը ձայնը լըսած էի:

Եւ առանց ներսէն բացուելուն սպասելու՝ կրթնեցայ դրան, և մէկ հարուածով՝ տապալեցի զայն:

Ինչ տեսնեմ, կինս սենեակին մէջ տարիքոս մարդու մը հետ, սարսափահար ինքզինքնին ծածկել կը ջանային:

Այդ վայրկեան քիչ մնաց խելքս պիտի թոցնէի, տունը գլխուս պիտի դառնար և ես ինքզինքէս աւելի կը մտածէի որ նախապէս այս պարագան նկատի առնելով տունքերնիս քեւս չիտուած չէր:

Տանը մէջ գտնուող բոլոր հանդիսականները... իրար անցեր և իրողութիւնն ալ հասկցեր էին:

Արժանապատուութիւնս փրկելու և անմէնուն խնդուքին առարկայ չըլլալու համար, անմիջապէս խոյացայ կնոջս ու մարդուն վրայ, բռնեցի երկուքին ալ օձիքէն, և երկուքն ալ կաշկանդելով փողոց նետեցի, դուռն ալ երեսնուն լաւ մը գոցելով:

Այդ միջոցին զոքանչս սթափած արդէն լալով ողբալով դէմս ելաւ, չո՛ւտ պօռացի, բոլորովին զայրացած, չո՛ւտ, պատասխան տուր, ինչ էր այս խայտառակութեան ու անպատուութեան պատճառը:

Զոքանչս վախէն հեծկալալով և հազիւ լսելի ձայնով մը.

— Օրդտի՛, մենք ըրինք դուն մի ընէր, աղքատ էինք, ճէ՛հէլի փարա չունէինք, հիշ մէկը մեզի փոխ փարա չտուաւ, առ մարդը մինակ յանձն առաւ մեզի պէտք եղած փարան տալու, պայմանաւ որ.....

Վա՛յ, վատե՛ր, գոչեցի, ձենէ ո՞վ ճէ՛հէղ ուղեց թշուառականներ, ես միակ աղջիկը ուղեցի ինծի, նէ դրախօսմա՝ նէ ալ ճէ՛հէղ պէտք էր, մինակ ինծի կընիկ մը....

Զղջացի ունեցած յամառ բնաւորութեանս համար, հասկցայ թէ անհնազանդութեան պատիժս գտած էի, հասկցայ թէ ծնողքս իմ օգտիս համար կաշխատէին միշտ, բայց շատ

ուչ էր: Բարկութենէս վայրի գաղանի մը պէս կը բորբոքէի, այդ վայրկեանին կնոջս ու իմ պատիւիս հետ խելքս ալ թռուցի, առանց զօքանչիս պաղատանքներուն ականջ կախելու՝ բռնեցի օծիքէն և ճիւղի մը պէս դուռնէն դուրս նետեցի, աղջկանդ քովը գնայ ըսելով:

Վեր ելայ, ուր հանդիսականները անաբեկած՝ ինչ ընելին շուարած կեցած էին, և հեռուէն առանց ինձ մօտենալու զիս կը դիտէին թէ՛ հիմա ինչ պիտի ընէի, վաղեցի լամբաները մարեցի և հանդիսականներուն դառնալով,

— Կը ներէք բարեկամներ անքաղաքավարութեանս, կրնաք երթալ, միայն սա ըսեմ որ՝ եթէ ձեր մէջը ինձ պէս յամառներ կան թող օրինակ առնեն զիս, և իրենց ծընողքին ու մեծերուն խօսքին համեմատ գործ տեսնեն ըսելով՝ երթաք բարովը զրի, ու գացի պառկիլ առջի պէս մինակուք:

Էսկի համամ էսկի քաս:

Երես

ՓՕԹԱՓՏՈՒՐԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՋՈՒԻ

Ս. Դաւթեան այս շարթու հրապարակ հանեց իր դասաղիրքերու ստուար շարքին 56րդ հատորը, որ աշխարհիկ լեզուի ամէնէն հատարեալ և խնամեալ ֆեռակաւութիւնն է:

Գործը ձօնուած է Աշխարհաբարի Գերականութեան Հիմնադիր մեծանուն Այտընեանի յիշատակին: Անոր գեղեցիկ Նախաբանը, ինչպէս և Գրադատականը հրատարակել առաջիկային վերապահելով՝ գործը կը յանձնարարենք հայ լեզուի ուսուցիչներուն:

ԴԻՆՆ Է 4 ԴԱՀԵԿԱՆ

Հասցե. 47, Պապր-Ալի Բասթարի
(Կազի ընկերութեան դէմ)

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Կիրակի, հակառակ պիզի պէս bisexen որ կը փչէր, Թեաքոր Վառիեթեն archicomble ըսուելու չափ լեցուն էր պէտք է ըսել, օթեակներէն մինչեւ բառափն:

Les deux extremités, Մնակեան-Ալիքսանեան, որոնք ատեն մը թատրոն ըսուած մարմինին ալ ու ձախ բազուկներն էին, հիմա ծանր օքէռասիօնի մը հետեւանօք, որուն պատճառը ԱՆՀԱՄԱՅԱՅՆՈՒԹԻՒՆՆ Է անվերջ — զատ զատ խումբեր կազմած ներկայացումներ կուտան, մին Պրուսա, իսկ միւսը Բերա:

Ալիքսանեան մեր ծանօթ tirantը, Հոլաս և Տիկին Հէքիմեան կարող եռօտանի մը կազմած, սկսած են շարունակել տաւաքիքիքսներ, որոնք միշտ թարմ միշտ ծափահարելի են որչափ ալ հին ըլլան անոնք:

Կիրակիի ներկայացումը Լիւսի Տիսիէ, մեծ յաջողութեամբ ներկայացուեցաւ հակառակ Պ. Հոլասի անակնկալ տկարութեան, որուն դերը Ալիքսանեան ստանձնած ու իրենն ալ Պ. Թոտորիի յանձնած էր:

Սակայն Ակայեանի մէթամօֆօզը կատարեալ անակնկալ մը եղաւ մեզ համար: Մինչ հանդիսականները վարագոյրը բացուելուն՝ հուժկու քեցօնը տեսնելու պատրաստուած էին, յանկարծ, Ակայեան կը փոխուի Մատմաղէլ Սալիլիօի, մէթամօֆօզ մը, որուն նմանը նոյն ինքն Gyp չպիտի կրնար յարմարցնել . . . :

Tant pis թատերասէր հասարակութիւնը վարժ է արդէն նմանօրինակ անտեղիութիւններու, որոնք ցաւալի է ըսել՝ միշտ կը պատահին, չեմ գիտեր ինչու . . . :

Ջերմապէս կը ծափահարենք Ալիքսանեան էֆէնտին, և իր նորակազմ խումբը, և կը մաղթենք որ իրենց այս գովելի ձեռնարկին մէջ ալ աւելի փայլուն յաջողութիւններ ունենան բայց ոչ երբէք . . . ընկերոջ միջեւ խրոկիւռաբանութիւններ:

Մեզ չիմար ներկայացման նիւթականին նկատմամբ կարծիք մը յայտնել, քանի որ այդ քանը իրենց արդար վարձքն է, սակայն կերեւայ թէ Սալվաթօնի ճոխ Բեթ մը ընկու չափ կըրիկ գումար մը գոյացած է:

Au revoir !

ՄԱՍԻԷ

ԻԶՄԻՐԵԱՆ ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

Հեղահամբոյր և պատկառելի դէմք մը, թաւ ու ճերմակ պեխեր սուր մորուքի մը հետ, մաքուր և չիք զրսերեւոյթ մը հակառակ իր յառաջացեալ տարիքին. երկայն վերարկու մը, որու լամբակին վրայ ծաղկեայ փնջիկ մը միշտ անպակաս, ու բերնին անկիւնը միացող հավանայի սիւսու մը, ահա ուրուագիծը Մօլիէռի յարգելի թարգմանիչին:

Առանց նայելու իր յառաջացեալ տարիքին՝ Նուպարեան, անխոնջ գրական արտադրող մը եղած է, մեծ մասամբ Եւրոպացի նշանաւոր գրողներու գործերու թարգմանութեամբ — որոնց քանակը մինչև այսօր քանի մը տասնեակը կանցնի — զորոնք գիտէ այնքան ճարտարօրէն հայայնել: Իր վերջերս հրատարակած կառակերգք. Մօլիէռի հատորը լաւագոյն թարգմանութիւններէն մին է հեղինակին, որու հրատարակման երկար ժամանակէ մը ի վեր կսպասէինք արդէն անհամբեր:

Ինչպէս վերել ըսի, Մեսրոպ Նուպարեան անխոնջ թարգմանիչ մը եղած է և հաւատարիմ աւանդապահը Իզմիրեան Գրական դըպրոցին թարգմանիչներու այն գեղեցիկ հոյլին, որ Եւրոպական գրականութեան այնքան գեղեցիկ հատորներ հայերէնի վերածեց, և մեր մէջ գրական ճաշակն արթնցնելու ոչ նուազ ծառայեց: Ո՞վ մեր մէջէն չէ կարդացած մէկ քանին գոնէ այն հատորներէն որ լոյս տեսան Իզմիրի Տէտէեան տպարանէն, նոյն այն Իզմիրեան դպրոցն էր որ հրատարակեց Մօլիէռի մէկ քանի նշանաւորագոյն գործերու թարգմանութիւնը: Այսօր Նուպարեանն է որ լիակատար կերպով կը ծանօթացունէ մեզ, ֆրանսայի այլ և այլ աննման հեղինակներուն գործերը, գեղեցիկ հայերէնով մը, ուր թարգմանիչը ամէն ճիգ թափած կերեւայ պատկերացնելու հեղինակներուն հազար և մէկ նրբերանգութիւնները:

Իր այդքան գրական արտադրութեանց մէջ ամենէն նշանաւոր ու կարեւոր տեղը կը բռնէ իր հեղինակած ֆրանսա-հայ բառարա-

նը, որ այնքան ջերմ ընդունելութիւն գտաւ մեր ամէն խաւերուն մէջ: Նուպարեան իր այնքան բազմազգաղ աշխատութեանց մէջ, կը զարմանաս թէ ինչպէս ժամանակ կուտենայ ամէն շաբաթ կանոնաւորապէս աշխատակցիլ Իզմիրեան շաբաթաթերթին: Յօդուածներ գրելով օրուան նշանաւորագոյն անհետացող դէմքերու վրայ, ու թարգմանութիւններ՝ օրուան օտար լաւագոյն գրողներէն, որոնց մէջ բաւական բարեկամներ ալ ունեցած է, ինչպէս անմահն Վիքթոր Հիւկօի հետ, որու իրեն ուղղած գնահատական մէկ ինքնադիր նամակը, ոսկեղօծ չղջանակներու մէջ առնելով կախած է Պուրնովայի իր բնակարանին փառաւոր աշխատանոցին մէջ:

Նուպարեան այնքան մօլի սիրահարը դարձած է իր գրական աշխատութեանց որ, երբեմն կը նայիս ամբողջ օրեր փակուած կը մնայ: Իր լուրջ ու մենաւոր աշխատանոցին մէջ, ամբողջ էութեամբ նուիրուած իր աշխատութեանց, մոռնալով իսկ դուրսի մանաւոր Իզմիրեան այդ եռուղեւ կեանքը, շաբաթը հազիւ անգամ մը միայն իր սիրական գիւղէն — Պուրնովայէ — Իզմիր իջնելով, այն ալ Իզմիրի թերթին տպարանը գալու համար, ուր ինք անձամբ կը կատարէ իր հրատարակելի գործերուն սրբագրութիւնները, այնքան բժախիտիբ է իր ամեն մէկ գործերուն մէջ:

Վերջին պահուն Պոլսահայ թերթերու մէջ հաճոյքով է որ կը կարգամ իր վերջին մէկ թարգմանած հատորին հրատարակման լուրը Դեպ ի բեւեռ անունով, որու մասին կը փութամ իմ խոնարհ չնորհաւորութիւններս յայտնել յարգելի և բազմաշխատ թարգմանիչին: մաղթելով որ ալ աւելի թարգմանածոյ հրատարակութիւններով ճոխացնէ Իզմիրեան գրական դպրոցին արտադրութեանց հոյլը ու քանակը:

ՄԱՍԻՑՈԹ

ԿԱՐԵՒՈՐ

Ամէն անոնց՝ որոնց հասցէին բաժնեգինի առաքման մասին գրած ենք, կը խնդրենք որ հաճին պատասխանել ընդ փոյթ: Նոյն խնդրանքը նաեւ մեր Պատ. Գործակալներուն:



POISSON D'AVRIL

Պատգուհաբեա՜ ...

Ըսէք, սրտերնուդ հօք՝ բան մը չի փրկուի ձեր ու յօք՝ բերաննիդ չի գար, երբ փողոցին երկայնքը, կրակի գաւակը կը պողայ իր այն ձայնովը, որուն նմանը Ակոյեանն ալ չի կրցաւ հանել կիրակիի ցերեկոյթին:

Բայց մեր այս օրուան ձուկը այդ կարգէն չէ:

Boisson de Marsը Սալվաթոն է, իսկ Poisson d'Avril՝ ձուկի տեղ տուտ մը:

Իբր թէ սուտը տարւոյն 365 օրերուն մէջ գոյութիւն չունենար, մարդիկ Ապրիլի առաջին օրին սուտ կը խօսին, սուտի կատակներ կընեն, ան առ կը խաբեն և ընդհանուր խաբէութիւն մըն է կը չըջի բերնէ բերան:

Կիններ կան՝ որոնք խաւարմէն մինչեւ խորիկէ իրենց էրիկը կը խաբեն, սակայն չեն մոռնար Ապրիլ մէկին կտրիկ fiasco մը ընել իրենց մարդուկին, որ շատ անգամ ալ իրականութիւնները՝ Ապրիլ մէկին հանդիպած ըլլալուն համար թախաի, սուտի կարգ կ'անցնին:

Օրիորդներ՝ տեսակ տեսակ սուտերով աչերը կը ներկեն իրենց հաւանած կամ սիրած երիտասարդներուն, պարզ ճիւղէ մը, աւելի ճիշդը՝ պոչ խաղցնել մը, որ Ապրիլ մէկին կրկնուելուն համար օյիւնի տեղ կ'անցնի:

Որքեւայրիները այդ օրին, ռանգ-վու կուտան իրենց տարիքին և դիրքին յարմար անհատներու, ուղածնին կընեն կըլան, և ի պահանջել հարկին, և կամ ֆիազան ծածկելու համար Ապրիլ մէկին կը վերադրեն:

Երիտասարդներ՝ քովով մը անոր ասոր աղջիկը իրենց տունը կը հրաւիրեն, կը տեսնուին և իմացուելու վաճառքէն զերծ մնալու համար «Ապրիլ մէկի կատակ էր» կըսեն ու կը խնդան:

Դեռ կրնանք թուել կարգ մը չըլլալիքներ, որոնք կըլլուն և կը կլլուն՝ լոկ Poisson d'Avrilի սովորոյթին երեսէն:

Ձեզի գաւազտական poisson d'Avril մը կուղեմ պատմել հոս, որպէս զի դադափար մը ունենաք այդ կարգի խաղերուն վրայ:

* * *

Եռեսուն և հինգը ճանկրտող ու սաղաշելէն քիչ մը շիրին օրիորդի մը մօրկանը ծանօթ երիտասարդ մը, օր առաջ այցելելով՝ քիչ մը տեսնուելու համար միջոց կը խնդրէ:

— Հրամմէ նայինք ետևը, դուռս առջիդ տայիմա բաց է, դուն առ տունին զաւակն ես, ի՞նչ կայ, ի՞նչ պիտի ըսէիր կըսէ մայրը՝ տղան վերի սենեակը առաջնորդելով:

— Խեղճ խապար մը ունիմ տուտու, դուն քուն բազդըդ արթուն, Կիւլիզարին խըսմէթ մը դուայ ...

— Վո՛ւյ, տղայ քէշկէ պիրտէն պիրէ չըսէիր, սիրտէս տամար փրթաւ գիտեմ քի...

— Մարիկա, մեռաւ չեմ ըսեր կոր, խըսմէթ, խըսմէթ ...

— Իշտէ հա, տասը տարին պէրի առանկ բան լսած չունէի տէ, պիրտէն պիրէ կէշուքիւն իմացայ... էյ ըսէ նայիմ ո՞վ է...

— Ըռարուքալը թիւթճօր մը, վաթսուն տարու, տուն տեղ, մաղաղան ըսպառչա մալ ունի, հէմ ալ մինակ, մարդ մարդասանք չունի ...

— Աման տղաս, աճապ երա՞ծ կը տեսնամ կոր ... տահա՞ ...

— Իշտէ ատ մարդը քու աղջիկդ պիտի առնէ, անցած օր ժամուն ավլուն տեսեր է տէ էթվարին հալին բէք է հաւներ, ըսեր է քի ըլլայ նէ աս աղջիկը ըլլայ, չէնէ չեմ կարգուիր խախուր կընեմ տէյի ...

— Էյ տօղառսու խելացի մարդ է եղէր...

նայէ ինտոր ճաշցեր է Կիւլիւզարիս խուլը խուսը ... պազի մարդ ինտան սառաֆի կըլլայ ...

— Էյ ինչ կըսես, կուտամ աղջիկդ ... , բարայ բուլ չուզեր կոր, ամէն աւուր լաթերը, փոխնորդ պիլէ պէտք չէ ...

— Քա ամա, երէկ գիշեր, խոռոզը վախթսիկ կուկուլիկու ըրաւ նէ ըսի քի, ես հաւան պիտի աւրուի եախօս խերով խապար մը պիտի առնեմ տէյի ...

— Էյէր հա ըսես նէ քիչ օրէն աս բանը պիտի ըլլայ կ'ատարի ...

— Քա ապրիս եաւրում, սրմա պըյըս ներդ սիրեմ, կուտամ, կուտամ, հէմ ալ ինծի նայէ, քեզի ալ թէլլալչէն մը կը հանեմ մէջէն ...

— Անանկ է նէ, իշտէ ես ալ սօն ճուղապիդ կը պէքլէյէի կոր, վաղը չէ միւս օր, Կիւլիւզարը կառնես մարդուն մաղազան կերթանք, հոն հոշ պէշ ընելնիքէն, գործը կը լմնցունէք, խօսկապին մասնին ալ հաղըր ճէպըն է, կը հանէ մատը կանցունէ, կըլլայ կերթայ ...

— Խաչոր սիրտս չառքմիշ կընէ կոր, գիտեմ քի, աշկիս դէմը Տէր Սէրէօրէն ծառք ծառքի տուէր է տէ ինծի մուծլու կը հանեն կոր ժամը գտնուողները ...

— Ինչալլահ տուտու, ինչալլահ, գործը եղածի պէս է, ես մէջն եմ գիտեմ, տանն կուզես նէ, մարդը ապան վառեր է աղջկանըդ չէ ալ ըսէիր նէ վրայ փարայ պիլէ պիտի տար ...

— Եռմուռճախը ան ինչ չէքիճի աշուրներ ունի քի, քիմ պիլիր մարդուն նաաըլ նայեցաւ քի, գամեց ձգեց հէրիֆը ...

— Իշտէ ինչ է նէ, ես կերթամ կոր, վաղը չէ մէկալնօր, երկուքդ մէկ կելաք, չարչին Եէլ եռտան Յակոր աղա տէյի կը հարցնէք ներս կը մանաք, քանթա մարդ մըն է, ան հէմէն գործը գիտէ, զաթը ձեզ կը նստեցնէ, հոշ պէշ ըսելնիքէն, գործը կը շտկէք ...

— Էյ աղէկ եմ եաւրում, ինչէն գիտնայ քի մենք ան գործին համար գացեր ենք տէյի, ատ թառաֆն ալ խօրաթենք ...

— Ծանում, Կիւլիւզարը հետ չէ մի, ան տեսածին պէս պիտի ճանչնայ ...

— Հա ատ ալ կայ ես, ինծի նայէ, էկէր բէք ներսիթին ալէֆ առած բան է նէ տայանմիշ ըլլամ ...

— Տայանմիշ չէ, վրան երեսըմիշ ըլլաս նէ չէ չպիտի ըսէ, ամա գիտես ես, եօլերը, ան առաջ ձեզ չի ճանչնալու պիտի գայ, դուն կամաց կամաց խօսք կը բանաս, առաջ էթաֆը կը ստըտիս տէ ետքէն գործը օտթան կը դնես ...

— Ատ եօլերուն տանիական գիտեմ լամա, մինչեւ աս օր խուլանմիշ ըլլալու հաճէթ չեղաւ տէ քիչ մը խամութին պիտի քաշեմ ամա, Աստուած մի՛ն է ...

— Քեզ նայիմ պէճէրուիս, ըսելով տղան դուրս կելլայ անհուն ուրախութեան մէջ ձգելով մայրն ալ աղջիկն ալ, որոնք այդ օրէն իսկ թէնճիթէները խալալը կուտան, հարսնիքի զէրաթին պատրաստ գտնուելու համար։ Միամիտները ...

* * *

Որոշուած օրին, ցերեկուան մօտ չփացած սղու մը պէս լալկան օր մը, անդադար կանճրեւէր։ Մայր և աղջիկ թաց խխում ապուշ ապուշ շուկային երկու կողմը աչք պտըտցնելով լէվին լէվին Եէլ եռտան Յակոր աղան կը փնտռէին և վերջապէս մարդ մը գիրենք կառաջնորդէ խանութ մը, ուր իրաւ ալ տարոք մէկը նստած քեզկեանին մօտ դուրսի անցու դարձը կը դիտեր։

— Վո՛ւյ ապրիս աղբարս, շնորհակալ եմ, ըսել է քի աս է խանութը, ըսելով տիկին մայրը ներս կը մանայ խանութէն, մինչ օրիորդը ամօթխած ու շուարած իրեն կը հետեւի։

— Բարի իրիկուն է բարի ցերեկ է ... ինչ ըսեմ ...

— Ասծու բարին հանում, հրամանցէք ... կըսէ մարդուկը ու երկու աթոռ ցոյց կուտայ իրենց օր նստին, կարծելով թէ յաճախորդ են։

— Խախովէ կը խմէք ...

— Չահմէթ չըլլար նէ խախովէ մը ապրիս պըրէիր գէշ չըլլար ...

— Մօ՛, գնայ երկու խախովէ ըսէ, երկու հատ ալ ջուր ...

— Չէ՛ չէ՛, մէկ հատ մը ... ճահիլները խախովէ չեն խմեր ...

— Ի՞նչ, չօճօխ մը կայ դալիք ... կըսէ Յակոր աղան չորսդին նայելով:

— Չէ նասը չօճօխ ... աղջիկս տահա թոյ է, անանկ խախլէ ֆիլանի վարժուած չէ ...

— Հա՛ ... կըսէ Յակոր աղա, աղջիկ ըսածին երեսի փոքրերը համբելով:

— Ի՞նչ պիտի առնէք հանրմ, եռնելո՞ւ, չէնէ մի իփէկի ...

— Էյ եապանճի չե՞ս ես հրամանքդ, եռնելու ալ կառնենք փիփէկի ալ ... ըսելով տիկինը քմծիծաղով մը առջին կը նայի, ուրկէ բան մը չի կրնար հասկընալ Յակոր աղա, մինչ տիկինը շարունակելով խօսքը,

— Ե՛լ եռտան Յակոր աղան հրամանքդ ես անանկ չէ՞ ...

— Այո՛ ...

— Էյ ոտքի վրայ մի կենար, սանկ նստէ նայինք, հիմա եապանճի պէս ենք ամա, կըլլայ քի կէս սահաթէն խըսըմի խըտար կըլլանք ...

Յակոր աղա ասուչ ասուչ կը դիտէ ու բան մըն ալ չի կրնար հասկընալ այս անպ-կընկալ այցելութենէն:

— Ամէն մար ինծի պէս չըլլա՞ր ամա, Էս կէնէ պարտքս կատարեցի ելայ եկայ ...

— Բարով եկար քուրուկս, հազար բա-րի, մենք ալ առտուընէ պէրի միւշտէրի տէյի չորսդինիս կը նայինք կոր ...

— Աղջիկս է ... Կիւլիւղարս ... (ու կսկսի մէյմը աղջկանը մէյ մ'ալ Յակոր աղային նայիլ):

— Աստուած պահէ ...

— Հէ՛մ պահէ հէ՛մ ալ տէրոջը պաղըչա-միշ ընէ ...

— Նշանած ըլլալու է կըսէ Յակոր աղա, խօսքը կարճ կապելու և մէկ կողմէ սառ-տուր ընելու համար:

— Խըսմէթ է նէ կը նշանենք, ֆախաթ, անէքի խօսք բացիր նէ, քեզի հետ կոորճիկ մը խորաթայ ունիմ Ե՛լ եռտան Յակոր աղաս:

Յակոր աղա, նախ դիւահարի տեղ դնե-լով քիչ մը ինքզինքը կը ժողուէ, սակայն երբ կը տեսնայ թէ կինը խնդիրը ծանրօրէն բռնել կուզէ, կը փախաքի սա խօսքերուն նիւթը ու հիւ թը հասկնալ, ուստի դաստակ-

ները թէղկեահին վրայ՝ ձեռքն ալ ծնոտին դնելով մտիկ կընէ:

— Ինծի նայէ Կիւլիւղար, հայտէ աղջիկս սանկ դուրսի ճամէքեանին մէջի ճիճիները սէյիր ըրէ էյլէնմիշ եղիր, մինչոք չի կանչեմ նէ մի գար ...

— Տուտուս, ինծի եռն իփէկի սլափ առնէ՞ս ...

— Խանութը որբնն է քի, չօճօխս, կէս սահաթէն ուղածդ բաքէթ ըրէ հետդ առ ... կըսէ մայրը, ինքնիքէն հարսնեւոր ձեւանա-լով ...

— Հիմա, ինծի մտիկ ըրէ Յակոր աղաս, բէք աղէկ խելացուծին ըրիր տէ գործին մէջը խըլալուդ ճատըսի մը, չըլըւ թէլլալ մը չի խօթեցիր ...

— Ես առանկ բաներ չունիմ քուրուկս, հէ՛մ առնեմ նէ, հէ՛մ ծախեմ նէ ինքրի դըլ-խուս իմ գործս կը տեսնամ ...

— Ապրիս, թամ խաֆայիս տէնին ես եղէր, հիմա ինծի մտիկ ըրէ, իշտէ աղջիկս տեսա՞ր ես, դաթը ինծի կուգայ յի տեսիր տէ հաւնէր էիր ...

—

Յակոր աղա մարմարէ արձան կը կարի, երբ անակնկալ կերպով գործին մէջը աղջիկ ըլլալը կը հասկնայ:

— Եանի կա՛յ եա՛ ... Յակոր աղաս քեզի անանկ ըռահաթ ընել կուտայ քի, դուն ալ շաշմիս կըլլաս, անանկ հիմաճուկ-ուաններուն պէս ցատկեմ, սօխախ իննամ, շաքխայիս թիւը փոխեմ, հիյօ պիյօ, ֆալան, մեղայ քի առ թառաֆները ըլլայ ...

— Աղէկ կըսես ամա, քուրըս, քեզի ո՞վ ըսաւ քի Յակորը ֆէնէոը ծառքը աղջիկ կը փնտռէ կոր տէյի ... եաղըչուծին մը չըլ-լա՛յ գործին մէջը ...

— Տէր ողորմեայ, նաղ ալ չընէք նէ չըլ-լար, էրիկմարդ խըսմին տայիմա ծանրէն կը քաշուի քի, անուշ դայ տէյի ...

— Անուշը աճին չիյտեմ, իմ գիտցածս սա է քի, ես եմ նէ կարգուելու հիշ միտք չունիմ, հէ՛մ ալ շաշմիշ կըլլամ կոր քի նա-սըլ է եղէր տէ քեզի տիր հոս վրաս խա-րեր են ...

— Ճանըմ շախան ձգէ, հասկցայ միտքդ, քիպարուծիւն կընես կոր տէ, պէլքի ալ կէշ

կրկնա կոր քի ինտոր մախսըմը տիրո հոս պերել տուիր տէյի, ամա զարար չունի, չօճուխը թող պացուի քիչ մը, հէմ ալ էրկանը խանութը ոտք կոխէ քի ուղու գայ ուղու ...

— Բուրիկա, զահմէթ կընէք կոր, ես անտեղուանքները միտք չունիմ, հէմ ալ կարգուելու չեմ, իմ տարիքս մարդը կարգուի տէ ինչ խեր պիտի տեսնայ ...

— Աման Յակոբ աղա, չախան հէրիք է, հիմաճուկ ըսէ նայիմ, խօսք կապի լճը պիտի հրամանս, ես քենէ խօշնիտ մնացի, հէլպէթ հրամանքդ ալ մենէ հազ ըրիր ...

— Էյ ույտուրտո՛ւք ... ըսելով Յակոբ աղա ճակատը կը չփէ ...

— Հիմաճուկ էկէր քի տուն փեսայ գալու միտք ունիսնէ, ան ալ ըսէ քի եաթախնուդ թախըմը հալածին տամ, զրգրեմ չըտկեմ քի ըռահաթ ընէք ...

— Ճանըմ զահմէթ մընէր տուտու, կայնէ նայինք ...

— Հիմա դուն ինծի սաղլամ խօսք տուր, երկու երեք օրէն ալ կուգաս խօսք կապը կը պերես, կըլայ կը կատարի, ամա մարդու բան մի ըսէր, զէրէ աղջկանս վրայ չար աչք կը պանի ...

— Պէ կէօղիւմ ես կարգուելու միտք չունիմ, դուն լախըտը կը հասկնաս ... աս տարիքիս մէջը ելլամ կարգուիմ տէ մասխառա՛ ըլլամ ...

— Էյ Յակոբ աղա, հէրիք ճիւղէլէլմիլ ըլլաս ... ամէն բան չափ մը ունի, հիմա աղջիկս գուրսէն խրսխանմիլ կըլայ քի երկուքս մինակ կը խորաթուինք կոր տէյի ...

— Խելքիս զարար պիտի գայ ...

— Նայէ քի մալիդ զարար չիգայ Յակոբ աղա, խելքիդ զարարը աղջիկս կը թամամցունէ, հիմա ինչ ըսեմ նէ պօշ է, չարաթ մը օլտուն մէկտեղ ապրելու ես քի համը հոսը առնես ...

— Կընիկ վրաս գէշութիւն կուգայ կոր, առտուանցով ուրկէ էր դէմս ելաք ... պէ պապամ հոս կարգուող չիգայ, ո՛վ խաթ է կերէր, ըսելով Յակոբ աղան կրակ կտրած կակի խանութին մէջը պարտկիլ ...

— Հասկըցայ ... աս ալ նոր մօտայ խուռնաղութիւն մըն է, կէօյամ քի առաջ փարայ փուլ չեմ ուզեր ըսեր ես, հիմա ալ փիւշման ես եղէր տէ, զօռպալանմիլ կըլլաս կոր քի բան մը փրցունես տէյի, հա՛ ... , նստած

տուներնուս մէկ տիրէկը կուտամ, հայտէ ան ալ սիրտս փէք սիրեց տէ անոր համար...

— Ծօ՛ պու նէ պէլալը կիւն իմիլ ... քա կընիկ, մէկ տիրէկը չէ քի, չաթըն վրաս փլցնես նէ կարգուելու չեմ ... կը հասկընաս կոր ...

— Բա վայ մեղքիս, աճապ աղջիկս աչկին դէմէն դուրս հանեցի տէյի սիրտը կէշ եղաւ, եկուր քա Կիւլիւզար, քիչ մըն ալ հոս նստէ ...

— Մարիկա, ոտքդ պապնեմ սիֆտահ չեմ ըրեր ...

— Հիմաճուկ եկող գացողները աչիլ ըրէ, խանութըդ սառաւէլայի ֆըլի պիտի դառնայ...

— Գիտեմ, հէլպէթ ատանկ պիտի ըլլայ, չիւնքիւ ինչտար ծան ունիմ նէ պօռամ պիտի...

— Բա ճանըմ, կէցիր նայինք, դուն իմ բօլթիքօղութեանս կը նայիս կոր ... հէ՛, ելիր վրաս մարդ խրկէ, աղջիկանս ներսիդին չորպայի պէս իրար անցուր, մեղի թախ հոս տեղուանքները բեր, անկէ ետքը կունակ դառցուր ... հա՛, ատանկ է ատէթը ...

— Կընիկ, ո՛վ մարդ խրկեց ... նստը աղջիկ, ո՛վ ըսաւ քի Ե՛լ եուտանը պիտի կարգուի տէյի ...

— Բա դուն Սուքիասին հետ խապար չի խրկեցիր, քի Կիւլիւզարին բէք եմ հաւնեք, թող մաղաղան գան չբըն իշի գործը լըմընցունենք տէյի ...

— Նասըլ Սուքիաս, ատ հէրիֆը ո՛վ է...

— Էյ հիմա տամլա պիտի իշնայ գլխուս...

— Իմ գլխուս ալ խաղանք կը պարպուին կոր խապար ես, որ սահաթ է չէնէ կառըտըրմիլ կընեմ կոր, չե՛ս հասկընար կոր ...

— Էյ ... սողրա՛մ ... ըսել է քի աղջիկս չպիտի առնես, միտք չունիս ... վա՛խ վա՛խ վա՛խ, դիանայի նէ, վարօռէն ելլալնիքէն մէկն ալ ալըճը կէօղիւով կը նայէր կոր նէ, անոր հետ բաղարըլսի կը նստէի...

Յակոբ աղա քրտինքներու մէջ խանութի աղուն դառնալով,

— Ծօ դնայ Գասպարին ըսէ քի ինծի իլիմօնաթա մը բերէ ...

Ու մինչ մայր ու աղջիկ սրտերնին կտոր կտոր բարկութեան դէնիթը հասած կը պատրաստուէին մօլիլ, աղեկը խնդալով ներս կը մտնայ ...

— Վարպետ, Գասպար աղան ըսաւ քի, օր մը օրանց Յակոբ աղան աս վախիթ իլիմօնաթա ուղած չունէր ... ԱՊՐԻԼԻՆ ՄԷԿՆ է, չեմ բերեր:

Սուքիասին խաղը յաջողած էր:

ԼԻԼԱ

ԿԱՏԱԿԱՍԵՐ ՆԿԱՐԻՉԸ

Երիտասարդ նկարիչ Պլանտեօֆ, ժամանակ չգտնար պատմելու իր ըրած անթիւ կատակները: Ահա այն կատակներէն մին, որուն հերոսը ըլլալուն համար կը պարծի: Սակայն ես կը տարակուսիմ՝ թէ այս անեքսոսին դարձուածքները, իր երեւակայութեանը մէջ գոյութիւն ունին և կը կատարածիմ անոնց իրական ըլլալուն:

Ձգենք իրեն պատմելու՝ այս կարճ անեքսոսը:

«Երեք տարի կայ ըսածս, այն ատեն, Մօն-Բառնասի կայարանին մօտերը կը ճաշէի և օրը երկու անգամ՝ ըստ սովորութեան:

«Առաւօտ մը, նախաճաշ ըրած ատենս, աչքերուս հանդիպեցան՝ զոյգ մը գաւառացիներ: Այդ անձերը — տէր և տիկին Պօնասիդ — եկան նստան նախաճաշելու այն սեղանին վրայ՝ ուր ես կը գտնուէի:

«Պահ մը ետքը, փորձեցին հետս խօսակցիլ, թերեւս Բարիզի վրայ տեղեկութիւն ուղղուելու համար, քանի որ առաջին անգամ ըլլալով կայցելէին:

«Ստանայական մտածում մը գանկիս մէջ ծնունդ առաւ, քանի որ գրպանս ճիշդ երկու ֆրանք և տասը սանթիմ ունէի՝ ամիսը անցընելու համար և դեռ ամսոյն քըսաներկուքն էր:

«Ուստի, փոխանակ բերանացի պատասխանելու Պօնասիդ ամոնեցուն, թուղթ մը առի, որուն վրայ գրեցի մատիտով մը՝ որ միշտ գրպանէս պակաս չըլլար:

«Ներեցեմ ինձ, skr եւ shkhin, աղբասնկարիչ արուեստագէտ մըն եմ, ի ծննդեցեմ խուլ եւ համր ... Կրնամ ձեզի առաջնորդել՝ Բարիզի ամեն կողմերը եւ աժան ալ՝ նկարներ շինել:

«Պատասխանս կարգալով, Պօնասիդները իրարու ակնարկ մը փոխանակեցին, յետոյ առանց ինձմէ քաշուելու քանի որ ես իրենց համար հոն չէի:

— Բանի որ Բարիզը չենք ճանչնար, խօսք առաւ տիկինը, հետեւինս եթէ առնէինք ... բարի տղայ մը կերուայ ...

— Ինչո՞ւ չէ, ըսաւ ամուսինը, նամանաւանդ մեզի սուղի չնստեցնէ:

«Գրաւոր խօսակցութիւն մը մեր մէջը փոխանակուեցաւ: Վերջապէս համաձայնեցանք Պօնասիդներուն հետ, որոնք՝ օրական երեք ֆրանք պիտի տային, ամէն տեղ իրենց պիտի ընկերանայի, իրենց հետ պիտի ճաշէի:

«Ինչ որ ըսուեցաւ՝ ան եղաւ: Աննկարագրելի կեանք մը սկսայ անցընել:

«Իմ գաւառացիներս, չորս գիշեր իրարու վրայ թատրոն տարի, այցելել տուի չորս թանգարաններ, երեք անգամ թիւնէլ նստեցուցի և ութը պատուական ճաշարաններ՝ մեր այցելութիւնը ընդունեցին ... երբէ՞ք այդքան լաւ կերած չէի:

«Դժբաղդաբար, այս մեծածախս հացկերութիւնը հետեւանքով խեղճերուն քսակը պարպուեցաւ:

«Չորրորդ օրուան իրիկունը, Պ. Պօնասիդ, խօսակցութեան տետրակը առնելով գրեց.

«Սիրելիս Պարոն Պլանտեօֆ. Բարիզի մեջ ապրիլ՝ շաք սուղ է ... Կինս եւ ես կը մտածենք շաբաթ մը եւս կենալ, բայց գրեթէ դրամնիս չէ մնացած: Ուստի, պարտաւորուած ենք վաղը մեկնիլ՝ դեպի Պրեքել, առաւօտեան ութը քան եւ հինգ անցած շոգեկառնով:

«Նոյն էջին վրայ ես ալ գրեցի.

«Անմխիբար եմ ձեր այս որոշումին համար, բայց, ձեզի պիտի ընկերանամ մինչեւ կայարան եւ ձեզմէ չպիտի բաժնուիմ՝ մինչեւ շոգեկառնին մեկնիլը:

«Եւ, հետեւեալ օրը, անոնց ընկերացայ մինչեւ Մօն-Բառնասի կայարանը:

«Չիրենք չողեկառք տեղաւորեցի և սպասեցի բաժանումի պահուն:

«Վերջապէս, մեկնումի պահը եկաւ, չողեկառքը սկսաւ դանդաղօրէն դաւալիլ:

«Իմ Պօնասիդներս պատուհանը կեցած ինծի միաս բարովի նշաններ կընէին եւ թաշկինակ կը շարժէին:

«Այն ատեն, ձեռքերս բերնիս երկու քովերը դնելով՝ անոնց պոռացի այն ձայնով՝ որ դուք ամէնքնիդ ալ գիտէք.

— Յտեալութիւն, դու մի ծաղիկներ, ցտեսութիւն, իմ բարի մարդիկս:

«Այն, տեսնելու էիք անոնց ապշուած թիւնը ...:

Թարգմ.

Վ. Գ.

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՆԿԱԼԹԻ. — Ջղային տկարութենէ վարակուած կարգ մը տիկիներէրու կը յանձնարարուի մէկ քանի լէմոն առնել միասին՝ երբ եկեղեցի երթան, որպէս զի խնդարէ չի մարին : Աստուծոյ տունը բաղնիք չէ ոչ ալ զբօսարան :
ԵՆՆԻ-ԳԱՐՈՒ. — Մեծաբարժամ

և յաղթանդամ եաղմածին անցեալ շաբթու ցերեկին Ֆէնէր, գիշերն ալ Լանկայ այցելութիւններ կրկնեց, որոնց համար կըսուի թէ՝ Պուաժօլի զոյգ նշանածներու դերը կը փորձէ կ'որ...

ՍԿԻՒՏԱՐ. — Կարգ մը աբառթըման օձիքլի միւսիւններ, որոնք լրագիրը գաղիներէն լեզուաւ մինչեւ որ չըլլայ՝ ձեռք չեն առներ, կ'իմանանք թէ՝ ցրուիչ Սահակէն շաբաթը տասը փարայ վարձքով Հանրագիտակ կարգալուրարի սովորութիւնը ունին... : (Ատուէսներ տուէք, յանուն գրականութեան, մարդասիրաբար ձեր հասցէին պատրաստ ենք մէկ մէկ օրինակ զըրկել՝ եթէ երբէք մէջի բարոյականը ձեր վրայ չինիչ ազդեցութիւն մը կըրնայ ունենալ. Ծ. Խ.) :

ՆՈՅՆ. — Ածուխի չգոյութեան օրերուն, սկամպիլճի ընտանիք մը բանէ գործէ ետ չի մնալու համար երկուքաշ ածուխ թեւերնուն տակը առած դրացիներն այցելութեան են գացեր : (Սէլամըղէն չըլլայ այդ լուրը. Ծ. Խ.) :

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Վերջապէս Տէրն պարգեւեց մեզ պատուական մի թաղ. Խորհուրդ :

ՆՈՅՆ. — Թաղ. Խորհուրդը կաղմուելէն ի վեր ժամկոչները նալչալը

մէկ մէկ զոյգ կոշիկ ապսպրեցին և այդ օրէն ի վեր եկեղեցի դիմալ երկսեռ ժողովրդին դէմ մասնաւոր յարգանք կը վարուին : (Հապա չընեն վտարուին... Ծ. Խ.) :

ԲԵՐԱ. — Անցեալ կիրակի Այիքսանեան ցերեկոյթին շնորհալի Տիկին մը բազմութենէն այնքան նեղուեր է որ՝ չի մարելու համար թէեւ քօռէն հաներ է, սակայն վերադարձին օթեակին մէջ մոռցած ըլլալով, կը խնդրուի թատրոնի կառսօններէն որ իրենց սիրուհի սպասուհիներէն՝ որու որ նուիրած են, ետ առնելով տիրուհւոյն յանձնեն : Բերա Կիւլէր փողոց թիւ 444 :

ՆՈՅՆ. — Էփթալօֆօսի գերահրէշ կինը, որուն ծանրութիւնը 257 քիլօ է կըսուի, տրամադիր է իր դիրութեան սիսթէմը ձրիաբար հաղորդել իր նիհար սեռակիցներուն : (Նշանածս զայիֆ է ըսողներուն աչքը լոյս. Ծ. Խ.) :

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — 140,000 տարի առաջ Իզմիտէն նամակ մը առինք՝ թերթիս ծաւալման մասին կարգ մը բանակցութիւններով համեմուած, եթէ այդ նամակը գրողին թողան թողան թողան թողան թողան թողան մէկը ողջ կամ մեռած ըլլալը յիշէ, թող գրէ մեզի այդ առթիւ : Մեր բաժնեգիրները դեռ չարթնցա՞ն արդեօք... :

Ursofiuskr ԱՐՄԲԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի թիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՅՐԱԳՆԱԳ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ
տոկունութեամբ եւ գիներու անմըցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ բնտիր
հագուստներու, կանանց թելադրանքներու
եւ տղայոց չիք եւ դիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—29



ԱՌԻԹԷՆ

ՕԴՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղաչ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Զինասանէ, Հեղիասանէ, Ճալալէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօղի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջաւերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ փերջին նորաձեւութեան վրայ պատրաստունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափէիներ, ամերիկեան կօշիկներ, Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիռիկլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով:

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար:

Ա.ՊԱՌԻԿԻ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար չաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայլթայլթել:

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները:

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-18

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են: